



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. դեկտեմբերին /վերլուծություն/

2003թ. դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 7933 գործարքներ, որոնց քանակը 2002թ. դեկտեմբերի համեմատ աճել է 40.9%-ով, իսկ 2003թ. նոյեմբերի համեմատ՝ 12.8%-ով:

2003թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը..



2003թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3377 օտարման գործարքների 90.8%-ը կազմել են առուվաճառքները, 8.7%-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 43.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 43.6%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. դեկտեմբերին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 34.3%-ով, իսկ 2003թ. նոյեմբերի համեմատ՝ 7.7%-ով: 2003թ. դեկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի 1294 առուվաճառքի գործարքների 63.6%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում, 2003թ. նոյեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.8%-ով, իսկ 2002թ. դեկտեմբերի համեմատ՝ աճել 14.1%-ով:

2003թ. դեկտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների վաճառքի եւ ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձեւավորվել են հետևյալ շուկայական գները եւ նրանց փոփոխման սահմանները՝

/1 ԱՄՆ դոլարը 2003թ. դեկտեմբերին համարժեք է 564.4 դրամի /

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն եւ առավելագույն գները 2003թ. դեկտեմբերին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		դեկտեմբեր 2003թ.	նոյեմբեր 2003թ.	դեկտեմբեր 2002թ.
Կենտրոն	250.0-970.0	415.4	408.5	321.0
Արաբկիր	200.0-560.0	309.8	306.4	219.0
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	195.2	194.0	133.0
Նոր-Նորք	115.0-250.0	153.5	152.1	112.0
Ավան	120.0-190.0	154.3	152.3	96.0
Էրեբունի	120.0-300.0	166.6	164.3	121.0
Շենգավիթ	120.0-250.0	164.2	163.4	120.0
Դավթաշեն	130.0-260.0	198.1	195.8	117.0
Աջափնյակ	120.0-250.0	175.9	173.1	116.9
Մալաթիա-Սեբաստիա	120.0-250.0	161.2	159.6	105.5
Նուբարաշեն	65.0-100.0	70.8	70.5	52.0
Երևան	65.0-970.0	196.8	194.6	137.6

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձեւավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. դեկտեմբերին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 1.1%, իսկ տարեկան աճը՝ 43.0%, ընդ որում ամսեկան միջին աճի տեմպի ցուցանիշը կազմել է -0.004:

2003թ. դեկտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 475 բնակարաններ, որոնց քանակը նոյեմբերի համեմատ աճել է 7.0%-ով, իսկ 2002թ. դեկտեմբերի համեմատ աճել՝ 16.7%-ով:

2003թ. դեկտեմբերին ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների եւ ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների

վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները եւ նրանց փոփոխման սահմանները՝

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն եւ առավելագույն գները դեկտեմբերին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/			
			դեկտեմբեր 2003թ	նոյեմբեր 2003թ	դեկտեմբեր 2002թ	
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	62.9	62.8	59.9	
	Ապարան	18.0-40.0	27.4	27.4	25.8	
	Թալին	18.0-40.0	25.2	25.2	22.5	
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	54.8	54.8	52.8	
	Մասիս	20.0-90.0	54.4	54.4	53.3	
	Վեդի	20.0-45.0	31.7	31.7	29.1	
Արարատ	Արարատ	22.0-50.0	31.6	31.6	29.5	
	Արմավիր	Վաղարշապատ	35.0-102.0	84.8	84.7	76.6
		Արմավիր	21.0-58.0	45.8	45.7	42.9
Մեծամոր		17.0-50.0	30.9	30.9	29.6	
Գեղարքունիք	Սեւան	20.0-50.0	30.7	30.7	29.7	
	Գավառ	20.0-50.0	30.5	30.5	29.2	
	Մարտունի	18.0-38.0	29.7	29.7	28.5	
	Վարդենիս	10.0-21.0	17.3	17.3	16.4	
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	62.1	62.0	59.0	
	Ստեփանավան	20.0-48.0	33.4	33.4	29.3	
	Սպիտակ	17.0-40.0	24.1	24.1	22.9	
	Ալավերդի	15.0-40.0	25.6	25.6	24.3	
	Տաշիր	15.0-28.0	19.4	19.4	18.2	
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	84.3	84.2	77.5	
	Նոր Հաճն	35.0-75.0	52.3	52.3	50.3	
	Բյուրեղավան	15.0-45.0	35.2	35.2	34.2	
	Եղվարդ	28.0-55.0	40.7	40.7	38.6	
	Հրազդան	18.0-55.0	31.1	31.0	28.7	
	Ծաղկաձոր	22.0-95.0	75.8	75.8	72.4	
	Չարենցավան	13.0-55.0	31.1	31.1	29.3	
Շիրակ	Գյումրի	30.0-100.0	72.0	71.9	62.9	
	Արթիկ	17.0-45.0	25.3	25.3	24.3	
	Մարալիկ	15.0-33.0	23.7	23.7	22.1	
Սյունիք	Գորիս	21.0-45.0	29.7	29.7	27.6	
	Կապան	18.0-52.0	29.5	29.4	26	
	Սիսիան	17.0-37.0	27.6	27.6	26.1	
	Մեղրի	18.0-40.0	25.2	25.2	23.3	
	Քաջարան	13.0-30.0	18.5	18.5	16.7	
Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	35.3	35.3	31.4	
	Եղեգնաձոր	20.0-58.0	46.9	46.9	45.3	
	Ջերմուկ	18.0-50.0	41.2	41.2	38.4	
Տավուշ	Դիլիջան	15.0-54.0	36.2	36.2	33.9	
	Իջեւան	23.0-60.0	40.4	40.4	39.5	
	Բերդ	15.0-43.0	29.3	29.3	27.6	
	Նոյեմբերյան	21.0-45.0	26.8	26.8	25.2	

2003թ. դեկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի տների բնակարանների միջին գների ամսեկան էական աճ չի արձանագրվել (ամսեկան աճը կազմել է 0.1%), իսկ տարեկան աճը՝ 6.7% :

2003թ. դեկտեմբերին մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 552 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 131, մյուս մարզերում միասին վերցրած՝ 421: 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 62.4%-ով, այդ թվում Երևան քաղաքում՝ 65.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 61.3%-ով: 2003թ. նոյեմբերի համեմատ, առանձնատների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 17.4%-ով, ընդ որում Երևանում՝ 0.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 23.8%-ով:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. դեկտեմբերին անհատական բնակելի տների վաճառքի եւ ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձեւավորվել են հետևյալ շուկայական գները եւ նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ եւ տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն եւ առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003 թ. դեկտեմբերին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ եւ տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		դեկտեմբեր 2003թ.	նոյեմբեր 2003թ.	դեկտեմբեր 2002թ.
Կենտրոն	255.0-990.0	430.1	422.5	322.0
Արաբկիր	205.0-580.0	314.9	310.9	220.0
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	198.1	196.3	135.5
Նորք-Մարաշ	120.0-340.0	314.6	311.5	261.0
Ավան	125.0-200.0	152.1	151.5	114.0
Էրեբունի	130.0-320.0	163.7	162.6	124.0
Շենգավիթ	120.0-260.0	165.9	164.1	120.5
Դավթաշեն	140.0-260.0	196	194.3	122.0
Աջափնյակ	125.0-230.0	172.3	169.9	117.0
Սալաթիա-Սեբաստիա	125.0-250.0	160.9	158.8	119.0
Նուբարաշեն	65.0-110.0	73.6	73.4	56.0
Միջինը Երևանում	65.0-990.0	212.9	210.5	155.5

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձեւավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. դեկտեմբերին առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 1.0 1%, իսկ տարեկան աճը՝ 36.9%:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների եւ ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձեւավորվել են հետևյալ շուկայական գները՝

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ եւ տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն եւ առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով,	Շինության 200.0քմ եւ տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/

		ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. դեկտեմբերին /ԱՄՆ դոլար/	դեկտեմբեր 2003թ.	նոյեմբեր 2003թ.	դեկտեմբեր 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	83.0	82.9	79.0
	Ապարան	20.0-55.0	38.8	38.8	35.9
	Թալին	15.0-40.0	28.1	28.1	26.2
Արարատ	Արտաշատ	28.0-85.0	61.9	61.9	59.7
	Մասիս	27.0-88.0	62.5	62.4	59.7
	Վեդի	25.0-60.0	36.3	36.3	34.7
	Արարատ	25.0-60.0	37.5	37.5	34.6
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	89.8	89.7	77.7
	Արմավիր	35.0-90.0	52.4	52.3	47.8
Գեղարքունիք	Սեւան	25.0-60.0	36.4	36.4	35.0
	Գավառ	25.0-65.0	39.9	39.9	37.9
	Մարտունի	20.0-55.0	33.9	33.9	31.9
	Վարդենիս	15.0-45.0	21.3	21.3	19.6
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	69.0	68.9	64.4
	Ստեփանավան	20.0-50.0	33.7	33.7	31.9
	Սպիտակ	17.0-50.0	24.1	24.1	23.7
	Ալավերդի	18.0-50.0	25.9	25.9	25.6
	Տաշիր	15.0-30.0	19.9	19.9	18.7
Կոտայք	Արովյան	40.0-110.0	92.6	92.5	88.7
	Նոր Հաճն	35.0-80.0	54.2	54.2	52.2
	Բյուրեղավան	15.0-50.0	38.2	38.2	36.2
	Եղվարդ	23.0-70.0	47.3	47.3	44.6
	Հրազդան	25.0-65.0	40.2	40.1	37.3
	Ծաղկաձոր	45.0-110.0	85.3	85.2	83.7
	Չարենցավան	25.0-50.0	33.4	33.4	32.1
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	91.0	90.9	85.4
	Արթիկ	18.0-55.0	28.7	28.7	26.0
	Մարալիկ	15.0-45.0	23.9	23.9	22.6
Սյունիք	Գորիս	22.0-65.0	31.7	31.7	30.3
	Կապան	25.0-55.0	31.1	31.1	28.6
	Սիսիան	18.0-50.0	28.7	28.7	26.8
	Մեղրի	18.0-40.0	28.2	28.2	23.9
	Քաջարան	15.0-30.0	19.2	19.2	17.5
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	37.0	37.0	34.6
	Եղեգնաձոր	20.0-65.0	49.3	49.3	47.1
	Ջերմուկ	25.0-60.0	43.4	43.4	40.9
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	39.2	39.2	37.5
	Իջևան	30.0-70.0	41.2	41.2	39.6
	Բերդ	20.0-50.0	30.9	30.9	29.1
	Նոյեմբերյան	20.0-50.0	30.8	30.8	29.1

2003թ. դեկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսեկան էական աճ չի արձանագրվել (ամսեկան աճը կազմել է 0.05%), իսկ տարեկան աճը 6.2%

Ընդհանուր առմամբ, հանրապետությունում 2003թ. դեկտեմբերին օտարվել են 378.26 հա /21.39 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 317.30 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 354.03 հա /20.96 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են առուվաճառքի, որից 296.67 հա գյուղատնտեսական նշանակության, 23.76 հա /0.22 հա Երևանում/, որից 20.37 հա գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ՝ նվիրատվության և 0.47 հա

/0.21 հա Երևանում/, որից 0.26 հա գյուտնտեսական նշանակության հողերի նկատմամբ՝ փոխանակման գործարքներ:

Առավել մեծ մակերեսով հողեր են վաճառվել Արմավիրի մարզում՝ 147.79 հա, որից 146.20 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ 2.37 հա, որից 2.03 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, Վայոց Ձորի մարզում:

Ստորև ներկայացվում է 2003թ. դեկտեմբերին մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակական և որակական տվյալների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	44	3.05	25	10.19	0	0.00	54	3.15	14	3.90
Արագածոտն	1	0.50	3	0.37	0	0.00	22	7.63	14	1.59	2	0.12
Արարատ	0	0.00	31	3.73	1	0.15	113	37.98	46	4.44	0	0.00
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	91	146.20	19	1.60	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	14	1.68	0	0.00	9	5.59	15	1.81	1	0.05
Լոռի	0	0.00	12	1.46	0	0.00	15	12.61	6	1.10	0	0.00
Վոտայք	10	1.08	6	0.48	2	4.60	43	12.67	61	6.35	5	0.70
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	62	59.51	4	0.36	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	7	3.32	1	0.14	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	6	2.03	3	0.34	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	1	0.10	7	2.54	3	0.29	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>11</b>	<b>1.58</b>	<b>110</b>	<b>10.77</b>	<b>29</b>	<b>15.04</b>	<b>375</b>	<b>290.08</b>	<b>226</b>	<b>21.17</b>	<b>22</b>	<b>4.77</b>

2003թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հողերի 780 առուվաճառքի գործարքներ, որից 387-ը՝ գյուղատնտեսական նշանակության, 387-ը՝ բնակավայրերի, 6-ը՝ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ:

2003թ. դեկտեմբերին հողերի առուվաճառքներից 102-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 23-ը՝ /1.62 հա/ Երևանում, իսկ 79-ը՝ /10.60 հա/ մյուս մարզերում: Աճուրդային կարգով վաճառված հողերից 11 միավորը /1.58 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական, 89-ը՝ /9.34 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 1-ը՝ /0.10 հա/ հասարակական կառուցապատման և 1-ը՝ /1.20 հա, Արարատի մարզում/ արդյունաբերական օբյեկտների:

2003թ. դեկտեմբերին հանրապետությունում վաճառված 6 միավոր արդյունաբերական օբյեկտների հողերից 5 միավորը գրանցվել է /4.95 հա/ Արարատի մարզում և 1-ը՝ /0.66 հա/ Երևանում: 2003թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 1 գործարք / 5.0 հա , Արարատի մարզում/:

2003թ. դեկտեմբերին, հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 387 գործարքներ, այդ թվում աճուրդվաճառքների 11, դատարանի վճռով 4 և վարձակալության իրավունքի վաճառքի 1 /վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն/ , որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսացող գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղ.նշ. հողերի վաճառքների				
	Ֆանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Ֆանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	1	0.50	36.0	36.0	36.0	22	7.63	840.0	7600.0	2655.0
Ապարան								130.0	1150.0	340.0
Թալին								200.0	1680.0	350.0
Ծաղկահովիտ								170.0	2100.0	270.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ						51	16.06	740.0	10000.0	2060.0
Մասիս						20	5.49	400.0	5600.0	1100.0
Վեդի						40	16.30	450.0	7200.0	1325.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						11	8.57	650.0	4650.0	1255.0
Բաղրամյան						37	119.50	130.0	1000.0	470.0
Վաղարշապատ						42	17.30	980.0	11150.0	2300.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ								420.0	1100.0	650.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի						5	1.24	100.0	4000.0	650.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						4	4.35	60.0	1180.0	250.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						6	7.61	360.0	5500.0	885.0
Գուգարք								500.0	6000.0	1450.0
Սպիտակ						1	0.87	500.0	3300.0	1025.0
Ստեփանավան						7	3.86	180.0	4000.0	345.0
Տաշիր						1	0.28	100.0	400.0	247.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	10	1.08	847.0	1465.0	1046.0	34	6.18	520.0	10100.0	5900.0
Եղվարդ						3	2.39	380.0	6100.0	2760.0
Հրազդան						5	3.88	250.0	4000.0	730.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						15	15.39	550.0	760.0	685.0
Ամասիա						1	2.77	80.0	525.0	195.0
Անի						8	7.56	240.0	800.0	280.0
Աշոցք								60.0	210.0	130.0
Արթիկ						38	33.80	140.0	800.0	260.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						6	2.32	200.0	1600.0	370.0
Կապան								120.0	2000.0	330.0
Մեղրի								400.0	4240.0	858.0
Սիսիան						1	1.00	90.0	1500.0	295.0
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր						4	1.03	260.0	4000.0	1550.0
Վայք						2	1.00	120.0	3400.0	750.0
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						1	0.32	100.0	2000.0	490.0
Իջևան						2	1.01	530.0	4000.0	1050.0
Նոյեմբերյան						4	1.21	100.0	8340.0	680.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2003թ. դեկտեմբերին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 238 առուվաճառքի գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 66, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մավերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մավերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	3	3675.0	44.0	44.0	44.0	13	13545.0	120.0	3800.0	2170.0
Ապարան								120.0	670.0	310.0
Թալին						1	2400.0	78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	31	37258.0	185.0	200.0	195.0	12	14360.0	175.0	2460.0	660.0
Մասիս						22	17080.0	270.0	3680.0	790.0
Վեդի						12	12960.0	115.0	1000.0	490.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						4	4020.0	180.0	2440.0	760.0
Բաղրամյան						1	1200.0	120.0	280.0	200.0
Վաղարշապատ						14	10741.0	280.0	3700.0	1250.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						7	5150.0	180.0	1000.0	520.0
Ճամբարակ								78.0	180.0	140.0
Մարտունի	14	16800.0	75.0	118.0	90.0	8	12990.0	120.0	320.0	230.0
Սևան								120.0	1000.0	250.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	12	14620.0	108.0	110.0	109.0	2	5230.0	78.0	440.0	200.0
Գուգարք								78.0	3800.0	700.0
Սպիտակ						1	1010.0	78.0	450.0	160.0
Ստեփանավան						2	2640.0	78.0	340.0	140.0
Տաշիր						1	2090.0	78.0	180.0	135.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան						30	27436.0	180.0	4300.0	1410.0
Եղվարդ	6	4800.0	305.0	305.0	305.0	30	35187.0	180.0	3670.0	1640.0
Հրազդան						1	870.0	180.0	4120.0	1300.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						2	762.5	120.0	2500.0	325.0
Ամասիա								78.0	180.0	135.0
Անի						2	2879.0	120.0	430.0	185.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Արթիկ								120.0	440.0	190.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						1	1417.0	78.0	670.0	380.0



Կապան								78.0	1000.0	410.0
Մեղրի								78.0	450.0	230.0
Սիսիան								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	3372.0	78.0	990.0	300.0
Վայք								78.0	1000.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								78.0	670.0	170.0
Իջևան						2	1570.0	78.0	1600.0	540.0
Նոյեմբերյան						1	1320.0	78.0	670.0	210.0

2003թ. դեկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 22 գործարքներ 10.46 հա մակերեսով, ընդ որում 12-ը Արարատի /2.83 հա/, 1-ը՝ Արմավիրի /2.00 հա/, 1-ը՝ Գեղարքունիքի /0.12հա/, 6-ը՝ Կոտայքի /2.42 հա/, 1-ը՝ Շիրակի /2.77հա/ և 1-ը՝ Տավուշի /0.32 հա/ մարզերում:

2003թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 679 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 29.0%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2002թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 27.6%-ով, իսկ 2003թ. նոյեմբերի համեմատ՝ 8.8%-ով:

2003թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 48 բնակարանների, 18 բնակելի տների, 167 հասարակական, 54 արտադրական նշանակության օբյեկտների, 389 հողերի և 3 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2003թ. դեկտեմբերին Երեւան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 41 վարձակալության գործարքների քանակները, 2002թ. դեկտեմբերի համեմատ նվազել են 26.8%, իսկ 2003թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 20.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ. դեկտեմբերին հանրապետությունում վարձակալվել են 1138.88 հա ընդհանուր մակերեսով հողեր /2.11 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 1108.49 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 9.87 հա բնակավայրերի, 18.26 հա արդյունաբերական օբյեկտների, 0.15 հա անտառային հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 421.56 հա, որից 421.15 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ Սյունիքի մարզում 7.07 հա, որից 4.80 հա գյուղատնտեսական նշանակության:

Ստորև ներկայացվում է 2003թ. դեկտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	32	114.78
Արարատ	0	0.00	34	146.00
Արմավիր	0	0.00	17	27.52
Գեղարքունիք	5	49.00	40	139.13
Լոռի	0	0.00	4	8.62
Կոտայք	0	0.00	51	180.22
Շիրակ	3	228.00	17	193.15
Սյունիք	0	0.00	3	4.80

Վայոց Ձոր	0	0.00	11	4.38
Տավուշ	0	0.00	8	12.88
<b>Ընդամենը</b>	<b>8</b>	<b>277.00</b>	<b>217</b>	<b>831.48</b>

2003թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 699 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.8%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը նոյեմբերի համեմատ աճել է 26.4%-ով, իսկ 2002թ. դեկտեմբերի համեմատ՝ 70.5%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 40.9%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /37.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /19.6%/, առանձնատների /12.2%/ և հողերի /24.7%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 331 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2002թ. դեկտեմբերի համեմատ աճել է 71.5%-ով, իսկ 2003թ. նոյեմբերի համեմատ՝ 79.9%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ. դեկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 102.26 հա /0.94 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 100.85 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում 53.83 հա, որից 53.36 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ 0.46 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, Արագածոտնի մարզում:

2003թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական եւ արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/, համապատասխանաբար, 25 և 3 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.4%: 2003թ. նոյեմբերի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակն նվազել է 39,1%-ով, իսկ 2002թ. դեկտեմբերի համեմատ աճել՝ 12.0%-ով: 2003թ. դեկտեմբերին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերում՝ 17.9%:

2003թ. դեկտեմբերին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 1328 գործարքներ, որոնց քանակը 2003թ. նոյեմբերի համեմատ աճել է 36.3%-ով, իսկ 2002թ. դեկտեմբերի համեմատ՝ 48.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.7%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /38.3%/:

### **ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն**